ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«22» 12 2012
N 23-24.
օր.N

«___»_____2012
N
օր. N

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն գ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2012թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

2.1 Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

2.3 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

3.4 Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն գ որոշման: Վճարումները կատարվում են դրամով՝ հետևյալ կերպ.

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
2.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
3.	ընդամենը տարեկան վարձը		325 000
4.			երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումի, անմիջապես հետո,

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

3.8 Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առ 01.04.2008թ.N26-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

Գ. Հակոբյան

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 01507079
հ/հ 90001830101

Կ.Տ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

Ա. Գրիգորյան

ք.Երևան, Կառավարական 3 շենք
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 01506515
հ/հ 900011016681

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն
հեռախոս՝ 1-99, 58-20-74